Mobile ID imID ԽԻՍՏ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՆՉՎՈՂ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարբերակ 2.0

Տարբերակ	Տարբերակի ամսաթիվ	Փոփոխություն/լրացում
1.0	09/16/2025	Ընդհանուր պայմանների 1-ին տարբերակ
2.0	17/04/2026	Ընդհանուր պայմանների տարբերակ 2 • Վերնագրի փոփոխություն Mobile ID imID խիստ նույնականացման, էլեկտրոնային թվային ստորագրության և առնչվող վստահության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ; • Հավաստագրերի թողարկման և սպասարկման ծառայության ավելացում; • «Հասկացություններ» բաժինը լրացվել է նոր հասկացություններով, մասնավորապես՝ էլեկտրոնային թվային ստորագրություն; • «Ընդհանուր դրույթներ» բաժնում մանրամասն ներկայացվել են Mobile ID imID ծառայություններին միանալու համար նախատեսված ընդհանուր պայմանները; • Ավելացվել է «Ծառայությունների մատուցման կարգը» 4-րդ բաժինը; • Ավելացվել է «Ծանուցումներ» 10-րդ բաժինը:

«ԻՄ ԱՅԴԻ» ՓԲ ընկերության (imID) ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները (այսուհետ՝ Ընդհանուր պայմաններ) կարգավորում են imID կողմից իր Օգտատերերին մատուցվող Mobile ID imID խիստ նույնականացման, էլեկտրոնային թվային ստորագրության, էլեկտրոնային անհատական հավաստագրերի թողարկման ու սպասարկման ինչպես նաև առնչվող այլ վստահության ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ կամ Mobile ID imID ծառայություններ) հետ կապված imID և Օգտատերերի միջև ծագող իրավահարաբերությունները:

Ընդհանուր պայմաններին միանալու համար Օգտատերերը տալիս են իրենց գրավոր համաձայնությունը բջջային կապի օպերատորների սպասարկման գրասենյակներում համապատասխան ձևի և բովանդակության դիմում-հայտ ներկայացնելու միջոցով: Ընդհանուր պայմանները և դիմում-հայտը միասին հանդիսանում են կնքված պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) imID և Օգտատիրոջ միջև:

imID-ն իրավունք ունի կատարել միակողմանի փոփոխություններ Ընդհանուր պայմաններում՝ դրանց ուժի մեջ մտնելուց նախապես՝ 15 օրացուցային օր առաջ, եթե դրանցով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ՝ հրապարակելով իր պաշտոնական կայքում, որը համարվում է պատշաճ ծանուցում:

Այն դեպքում, եթե՝

- Օգտատերը համաձայն չէ փոփոխության հետ, ապա կարող է սահմանված կարգով դիմում ներկայացնել imID-ի կողմից մատուցվող ծառայությունները դադարեցնելու համար:
- սահմանված ժամկետում Օգտատերը դիմում չի ներկայացրել ծառայությունները դադարեցնելու համար, ապա համարվում է, որ նա ընդունել է փոփոխություններն ամբողջությամբ և անվերապահորեն: Ընդ որում, Օգտատերն ինքն է կրում փոփոխություններին հետևելու պարտավորությունը:

1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ընդհանուր պայմաններում օգտագործվող հասկացությունները, եթե այլ բան դրանցով սահմանված չէ, ունեն հետևյալ նշանակությունները.

1.1.1. **imID** – «ԻՄ ԱՅԴԻ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցման համարը՝ 264.120.1370112, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն (ՀՀ), քաղաք Երևան, Ազատության պողոտա 24/1), որը 09.12.2025թ.-ին ՀՀ կառավարության 1015-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ստացել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնի հավատարմագրում և մատուցում է Mobile ID imiD ծառայությունները:

1.1.2. **Էլեկտրոնային թվային ստորագրություն** – ՀՀ-ում գործող շարժական բջջային կապի ծառայություններ մատուցող օպերատորի կողմից տրամադրված նյութական կրիչի (շարժական բջջային կապի հեռախոսաքարտի) տվյալների էլեկտրոնային պահոցի կամ Օգտատիրոջ տվյալների նույնականացման ներկառուցված թվային մոդուլի (eSIM) վրա անհատական հավաստագիրն ստուգելու համար բջջային ստորագրության օպերատորի մշակած ծրագրային գործիքով հավաստիանալու հնարավորությամբ օժտված էլեկտրոնային թվային ստորագրության տեսակ:

1.1.3. **Խիստ նույնականացում** – imID հավաստագրման կենտրոնի կողմից հանրային բանալիների ենթակառուցվածքի (PKI) ծրագրային և ապարատային գործիքների կիրառմամբ տվյալ անձի համար նախկինում անհատապես թողարկված հավաստագիրը տվյալ անձի ինքնության հետ հստակ նույնականացնելու ավտոմատացված գործընթաց.

1.1.4. **Ծառայություններ կամ Mobile ID imID ծառայություններ** – imID կողմից Օգտատիրոջը մատուցվող Mobile ID imiD խիստ նույնականացման (Օգտատիրոջ խիստ նույնականացման հնարավորություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ մասնավոր կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում), էլեկտրոնային թվային ստորագրության (Օգտատիրոջ կողմից էլեկտրոնային փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ մասնավոր կազմակերպությունների տեղեկատվական համակարգերում), էլեկտրոնային անհատական Հավաստագրերի թողարկման ու սպասարկման, ինչպես նաև առնչվող այլ վստահության ծառայություններ:

1.1.5. **Օգտատեր** – ֆիզիկական անձ, ով սահմանված կարգով դիմում-հայտ է ներկայացրել բջջային կապի օպերատորների սպասարկման գրասենյակներից որևէ մեկում և ընդունել է Ընդհանուր պայմանները[1]:

1.1.6. **Բջջային կապի հատուկ կրիչ** – շարժական բջջային կապի հեռախոսաքարտ (mSim) կամ վերջինիս ներկառուցված թվային մոդուլ՝ eSIM, որում պահվում է Օգտատիրոջ համար նախկինում անհատապես թողարկված Հավաստագրի ստուգման և էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման ծրագրային մոդուլը:

1.1.7. **Դիմում-հայտ – Բջջային կապի օպերատորի գրասենյակում** Օգտատիրոջ կողմից լրացված և ստորագրված փաստաթուղթ Ընդհանուր պայմաններին միանալու և Ծառայություններն ակտիվացնելու, փոփոխություններ կատարելու կամ դադարեցնելու վերաբերյալ:

1.1.8. **PIN ծածկագիր** – Օգտատիրոջ կողմից սահմանվող անձնական գաղտնաբառ, որը կիրառվում է Ծառայությունների օգտագործման, մասնավորապես՝ խիստ նույնականացման և ստորագրման գործընթացներում:

1.1.9. **Հավաստագիր կամ Հավաստագրեր** - Օգտատերերին Ծառայությունները մատուցելու նպատակով imID հավաստագրման կենտրոնի կողմից թողարկված էլեկտրոնային փաստաթուղթ կամ փաստաթղթեր, որոնք հաստատում են ստորագրող և/կամ նույնականացող անձին էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և էլեկտրոնային թվային ստորագրության պատկանելությունը և ծառայում որպես էլեկտրոնային թվային ստորագրության իսկության ստուգման միջոց: Ծառայությունները մատուցելու համար imID հավաստագրման կենտրոնի կողմից միաժամանակ թողարկվում է երկու հավաստագիր՝ էլեկտրոնային թվային ստորագրության և նույնականացման:

1.1.10. **Բջջային կապի օպերատոր** – բջջայի կապի ծառայություններ մատուցող իրավաբանական անձ, որն իր Սպասարկման գրասենյակում imID անունից իրականացնում է գրանցման մարմնի գործառույթներ, մասնավորապես՝ Օգտատերերի

[1] Օգտատեր են հանդիսանում նաև այն ֆիզիկական անձինք, ովքեր՝

ա) մինչև Ընդհանուր պայմանների ուժի մեջ մտնելը ներկայացրել են ՄՈԲԱՅԼ ԱՅԴԻ խիստ նույնականացման և/կամ էլեկտրոնային ստորագրությունների ծառայություններից օգտվելու վերաբերյալ համապատասխան դիմում ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ ՓԲ, ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԲԲ, ՅՈՒՔՈՄ ՓԲ ընկերություններին և օգտագործել նախկինում ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ ՓԲ ընկերության կողմից օգտագործվող ՄՈԲԱՅԼ ԱՅԴԻ ծրագրային լուծմամբ ՄՈԲԱՅԼ ԱՅԴԻՆ,

բ) Ընդհանուր պայմանների ուժի մեջ մտնելու պահին ունեն ակտիվ ՄՈԲԱՅԼ ԱՅԴԻ և տեղեկացվել են Ծառայությունների մատակարարի փոփոխության մասին, և այդ ծանուցումը ստանալուց հետո շարունակել են օգտվել Ծառայություններից:

նույնականացում, Դիմում-հայտերի ընդունում, Բջջային հատուկ կրիչի տրամադրում, Ծառայությունների գործարկման, փոփոխության, դադարեցման, Հավաստագրերի թողարկման և դադարեցման համար անհրաժեշտ գործողություններ և Ընդհանուր պայմաններով նախատեսված այլ գործողություններ: Բջջային կապի օպերատորների ցանկը հրապարակվում է imID-ի կայքէջում (www.imid.am):

1.1.11. **Սպասարկման գրասենյակ** – imID կամ Բջջային կապի օպերատորի ֆիզիկական սպասարկման կետ, որը նախատեսված է Օգտատերերի նույնականացման, Դիմում-հայտերի լրացման և Ծառայությունների գործարկման, փոփոխության, դադարեցման գործընթացի իրականացման համար:

1.1.12. **imID ընկերության կայքէջ** - www.imid.am հղումով հասանելի կայքէջ:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1. Ծառայություններից կարող են օգտվել միայն այն ֆիզիկական անձինք, ովքեր ունեն համապատասխան տեխնիկական հնարավորություններով օժտված բջջային հեռախոս և՝

- հանդիսանում են ՀՀ քաղաքացի և ունեն գործող նույնականացման քարտ,
- հանդիսանում են օտարերկրյա քաղաքացի և ունեն վավեր ՀՀ կացության քարտ՝ մշտական կամ ժամանակավոր, կամ ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք կամ հատուկ անձնագիր, ինչպես նաև անձը հաստատող վավեր փաստաթուղթ, ՀՀ իրավասու մարմնի կողմից հատկացված հանրային ծառայությունների համարանիշ կամ
- հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետության քաղաքացիներ, ովքեր ՀՀ կառավարության 1954 N որոշման համաձայն ստացել են հանրային ծառայությունների համարանիշ, ՀՀ աշխատանքի իրավունք և ունեն ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք, ինչպես նաև անձը հաստատող վավեր փաստաթուղթ կամ
- հանդիսանում են տեղահանված և ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ստացած անձինք և ունեն անձնագիր՝ բացառապես 070 ծածկագրով և ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայական, որը ներառում է նաև վերջինիս հանրային ծառայությունների համարանիշը:

2.2. 16 տարեկանը լրացած անձինք, ովքեր ունեն նախորդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև հեռախոսահամար ևս կարող են միանալ Ընդհանուր պայմաններին և օգտվել Ծառայություններից:

2.3. Անձինք, ովքեր առողջական խնդիրների պատճառով չեն կարողանում ինքնուրույն իրականացնել իրենց իրավունքները և պարտականությունները, կարող են միանալ Ընդհանուր պայմաններին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Օգտատերն ընդունում է Ընդհանուր պայմաններն ամբողջությամբ՝ առանց վերապահումների, եթե սահմանված կարգով ստորագրում է Դիմում-հայտը:

2.5. Օգտատերը Ծառայություններից օգտվելու համար պետք է ներկայանա Բջջային կապի օպերատորի սպասարկման գրասենյակ անձամբ՝ նույնականացման համար: Նկատի ունենալով բջջային կապի օպերատորի կողմից Օգտատիրոջը նույնականացնելու անհրաժեշտությունը՝ լիազորագրի (այդ թվում՝ նոտարական կարգով վավերացված լիազորագրի) միջոցով Ծառայություններին միանալ, փոփոխություններ կատարել չի թույլատրվում:

2.6. Բջջային կապի օպերատորի կողմից նույնականացվելուց հետո, Ծառայությունների ակտիվացման ժամանակ, Օգտատիրոջ անունով imID կողմից թողարկվում են նույնականացման և էլեկտրոնային թվային ստորագրության Հավաստագրեր, որոնց սպասարկումն իրականացվում է imID կողմից Ծառայությունների մատուցման ողջ ընթացքում:

2.7. Օգտատերը Ծառայություններից կարող է օգտվել բացառապես imID-ի հետ համագործակցող մասնավոր կազմակերպությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելիս, և այն պայմանով եթե Օգտատիրոջ կողմից պայմանագրային և տեխնիկական բոլոր պահանջները կատարվել են:

2.8. Օգտատերը միևնույն Բջջային կապի օպերատորի կողմից թողարկված բջջային քարտերով կարող է ունենալ միայն մեկ ակտիվ Ծառայություն:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3.1. Հաշվի առնելով մատուցվող Ծառայությունների առանձնահատկությունները, մասնավորապես այն հանգամանքը, որ դրանք ուղղված են անձանց համար Հավաստագրեր թողարկելուն և սպասարկելուն, խիստ նույնականացման և էլեկտրոնային թվային ստորագրության իսկության, imID-ն իրավունք ունի մերժել Ծառայությունների մատուցումը, եթե՝

ա) անձը չի ներկայացրել Ծառայություններին միանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը;

բ) երբ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը կեղծ են, անվավեր, պարունակում են սխալներ կամ չեն պատկանում ներկայացնող անձին;

գ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերի առկայության դեպքերում:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. imID-ն Ծառայությունները մատուցելիս՝

- թողարկում և սպասարկում է Հավաստագրերը, այդ թվում՝ դադարեցնում դրանց գործողությունը,
- վարում է թողարկված Հավաստագրերի ռեեստրը՝ ապահովելով վերջինիս պահպանությունը,,
- ապահովում է Հավաստագրերի պաշտպանվածությունը և եզակիությունը,
- ապահոում է ստորագրող անձի անձնական տվյալների գաղտնիությունը,
- պարտավորվում է հնարավորություն տալ Օգտատիրոջը ստուգելու իր Հավաստագրերի վավերությունը օրական 24 ժամ,
- հավաստում է Հավաստագրերի և էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների համապատասխանությունը և պատկանելիությունը ստորագրող անձին:

4.2. Ծառայությունները Օգտատերերին մատուցվում են անվճար: Բջջային կապի օպերատորների կողմից կարող են սահմանվել բջջային քարտի տրամադրման վճարներ՝ համաձայն իրենց սակագների:

4.3. Ծառայությունները ակտիվանում են և Հավաստագրերը թողարկվում են 5 տարի գործողության ժամկետով:

4.4. Միանալով Ծառայություններին Օգտատերերը տալիս են իրենց անվերապահ համաձայնությունը Դիմում-հայտերում նշված կոնտակտային տվյալներով ծանուցումներ և այլ հաղորդագրություններ ստանալու վերաբերյալ:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ծառայությունները Օգտատերերին մատուցվում են հետևյալ ընթացակարգով.

ա) Օգտատերը իրեն ծառայություններ մատուցող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց տեղեկատվական համակարգերում ընտրում է Mobile ID imID խիստ նույնականացման կամ էլեկտրոնային թվային ստորագրության հնարավորությունը (որը կարող է նշված լինել imID լոգոտիպով կամ այլ տեսանելի և հասկանալի եղանակով):

բ) Օգտատիրոջ բջջային հեռախոսին ուղարկվում է համապատասխան հրահանգ կամ հաստատման հարցում,

գ) PIN ծածկագիրը մուտքագրելով՝ Օգտատերը հաստատում է խիստ նույնականացման կամ էլեկտրոնային ստորագրության կատարումը՝ օգտագործելով համապատասխան հավաստագիրը:

5.1. PIN ծածկագրի մուտքագրմամբ Օգտատերը ինքնուրույն և իր հայեցողությամբ հաստատում է խիստ նույնականացումը կամ էլեկտրոնային ստորագրությունը՝ ամբողջությամբ գիտակցելով, որ դա առաջացնում է համապատասխան իրավական հետևանքներ, այնպես, ինչպես կառաջացներ, եթե ինքը այդ գործողությունները կատարեր ֆիզիկապես:

5.2. Ծառայություններից օգտվելիս Օգտատիրոջ հեռախոսը պետք է լինի ապաբլոկավորված, որպեսզի հնարավոր լինի ստանալ PIN ծածկագրի մուտքագրման համար անհրաժեշտ էլեկտրոնային հաղորդագրություն:

6. ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

6.1. imID-ն չի տիրապետում Օգտատերերի PIN ծածկագրին և Օգտատերը պարտավորվում է պահպանել իր PIN ծածկագրի գաղտնիությունը և չտրամադրել այն որևէ երրորդ անձի, ներառյալ imID աշխատակիցներին: Օգտատերը գիտակցում է, որ PIN ծածկագրի միջոցով կատարված բոլոր գործողությունները համարվում են իր կողմից հաստատված և կրում է լիակատար պատասխանատվություն դրանց հետևանքների համար:

6.2. Օգտատերը պարտավորվում է անձամբ օգտվել Ծառայություններից և SIM քարտը, հեռախոսը կամ Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ այլ սարքերը չտրամադրել երրորդ անձանց՝ նրանց կողմից Ծառայություններից օգտվելու նպատակով:

6.3. Օգտատերը ինքնուրույն և լիակատար պատասխանատվություն է կրում սույն բաժնում նախատեսված անվտանգության կանոնների խախտման հետևանքով առաջացած հետևանքների համար:

6.4. SIM քարտի կորստի, գողության, վնասման կամ բջջային հեռախոսի կորստի դեպքում Օգտատերը պարտավոր է անհապաղ տեղեկացնել իր բջջային կապի օպերատորին՝ անձամբ մոտենալով վերջինիս սպասարկման գրասենյակ Ծառայությունները դադարեցնելու և նորից ակտիվացում կատարելու համար:

6.5. Նոր PIN ծածկագիրը ստեղծելու (հինը փոփոխելու համար) Օգտատերը պետք է դիմի Բջջային կապի օպերատորին: PIN ծածկագրի փոփոխության կամ վերականգնման համար Օգտատերը պետք է անձամբ ներկայանա Բջջային կապի օպերատորի սպասարկման գրասենյակ՝ իր անձը հաստատող փաստաթղթերով՝ նույնականացման նույն գործընթացն

անցնելու համար: Նույնականացման գործընթացից հետո Օգտատիրոջ կողմից ստորագրվում է համապատասխան դիմում-հայտ: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ հեռավար եղանակով PIN ծածկագրի վերականգնում չի իրականացվում:

6.6. Օգտատերը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բջջային կապի օպերատորին, եթե ունի կասկածներ, որ որևէ երրորդ կողմ անօրինական օգտվում է Ծառայություններից իր փոխարեն և իր անունից: Նման դեպքում Օգտատերը անմիջապես մոտենում է բջջային կապի օպերատորի գրասենյակ՝ Ծառայությունները դադարեցնելու և Ծառայություններին կրկին միանալու համար:

6.7. Օգտատերը իրավունք չունի օգտագործել Հավաստագրերը անօրինական նպատակներով:

7. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

7.1. Ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ Հավաստագրերի գործողությունը դադարեցվում է imID կողմից, եթե՝

ա) Օգտատերը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով դիմել է Ծառայությունների մատուցումը և Հավաստագրերի գործողությունը դադարեցնելու համար, ընդ որում՝ էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում՝ նամակն ուղարկվում է Օգտատիրոջ Դիմում-հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեից;

բ) Օգտատիրոջ կողմից Ընդհանուր պայմանների խախտումներն ունեն շարունակական բնույթ կամ հանգեցրել են imID-ին պատճառված նյութական վնասների;

գ) պետական մարմինների կողմից կայացվել է համապատասխան որոշում, կարգադրություն կամ որևէ այլ փաստաթուղթը, որը պարտավորեցնում է imID-ին դադարեցնել Ծառայությունների մատուցումը;

դ) imID-ն դադարեցնում է Ծառայությունների մատուցումը բոլոր Օգտատերերի համար;

ե) Օգտատերը մահացել է և այդ փաստի հիմնավորումը հաստատվել է բնակչության պետական ռեգիստրի կամ պետկան այլ մարմինների տեղեկատվական շտեմարանների կողմից տրամադրված տեղեկատվությամբ;

զ) հայտնաբերվել է, որ Օգտատերը ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ փաստաթղթեր;

է) Եթե՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել է, որ Հավաստագիրը կեղծվել է, կամ Հավաստագրի օգտագործումը վնաս է պատճառում ստորագրող անձին կամ երրորդ անձի;

ը) էլեկտրոնային ստորագրությունը անօրինական կերպով օգտագործելու դեպքում;

ի) լուծվել է շարժական կապի բաժանորդագրության պայմանագիրը կամ կատարել է անվանափոխություն, կամ կատարել է հեռախոսահամարի փոփոխություն կամ կատարել է անձնական տվյալների (անուն, ազգանուն) փոփոխություն, sim/eSIM քարտի փոխարինման դեպքերում, ընդ որում, անձնական տվյալների (օրինակ՝ անուն, ազգանուն) փոփոխության դեպքում՝ Օգտատերը պարտավորվում է դրանք կատարելուց հետո անմիջապես կամ առավելագույնը 7 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Բջջային կապի օպերատորին;

թ) Օգտատերը փոխել է բջջային կապի օպերատորին:

7.2. Բացառությամբ այն դեպքերի, երբ Ծառայությունների մատուցումը և Հավաստագրերի գործողությունը դադարեցվում է imID-ի նախաձեռնությամբ, մնացած բոլոր դեպքերում Օգտատերը պետք է անձամբ այցելի բջջային կապի օպերատորի սպասարկման գրասենյակ,

անցնի նույնականացման ընթացակարգով և ստորագրի համապատասխան դիմում-հայտը՝ Ծառայությունների դադարեցման վերաբերյալ: imID-ի ներքին ընթացակարգով սահմանված լինելու դեպքում կարող է սահմանվել հեռավար կարգով Օգտագիրոջ գրավոր պահանջի հիման վրա Ծառայությունների դադարեցում:

7.3. Սույն փաստաթղթով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում imID-ի նախաձեռնությամբ կարող է Ծառայությունների մատուցումը և Հավաստագրերի գործողությունը դադարեցվելու դեպքերում՝ գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ծանուցում ուղարկվել Օգտատիրոջը:

7.4. Ծառայությունների դադարեցման պահից Օգտատերը այլևս չի կարող օգտվել Ծառայություններից, սակայն նախկինում Ծառայությունների միջոցով կատարված բոլոր գործողությունները պահպանում են իրենց ուժը:

7.5. Օգտատերը տեղեկացված է, որ անվավեր, դադարեցված, գործողության ժամկետը լրացած Հավաստագրերի հիման վրա կատարված էլեկտրոնային ստորագրությունները անվավեր են:

8. ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

8.1. Ծառայությունները մատուցվում են դրանց վերաբերելի իրավական ակտերով, այդ թվում՝ ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի թիվ 572-Ն որոշմամբ սահմանված կրիպտոգրաֆիկ և տեխնիկական պահանջներին համապատասխան:

8.2. Ծառայությունների հետ կապված խնդիրների դեպքում Օգտատերերը կարող են դիմել imID-ին իր կայքէջում ներկայացված կոնտակտային տվյալների միջոցով կամ իրենց հեռախոսահամարը սպասարկող բջջային կապի օպերատորին:

8.3. imID-ն կարող է Օգտատերերի աջակցությունն իրականացնել նաև բջջային կապի օպերատորների միջոցով կամ փոխանցել Օգտատերերի հարցումները բջջային կապի օպերատորին՝ դրանց վերաբերյալ պատասխան տալու և խնդիրները լուծելու նպատակով:

8.4. imID-ն պարտավորվում է Օգտատերերին տրամադրել աջակցություն ողջամիտ ժամկետներում և պատշաճ ձևով: Աջակցության շրջանակը սահմանափակվում է բացառապես Ծառայություններին առնչվող հարցերով և չի ընդգրկում Օգտատիրոջ սարքավորումների կամ երրորդ անձանց հարթակների ծրագրային ապահովման հետ կապված խնդիրները:

9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

9.1. Օգտատերը պատասխանատվություն է կրում imID-ին տրամադրված տեղեկատվության ճշգրտության և հավաստիության համար: Օգտատերը պարտավորվում է հատուցել imID-ին պատճառված իրական վնասները, որոնք առաջացել են իր կողմից ոչ հավաստի տեղեկատվություն տրամադրելու, գաղտնի տվյալների և մուտքի տվյալների անփույթ պահպանման, կամ պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով:

9.2. Կողմերը համաձայնվում են ՀՀ օրենսդրությամբ թույլատրված սահմաններում հրաժարվել Ընդհանուր պայմանների համաձայն մատուցվող Ծառայությունների հետ կապված միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներ ներկայացնելուց:

9.3. Օգտատերը գիտակցում և համաձայնվում է, որ՝

ա) imID-ն չունի որևէ տեղեկություն Ծառայությունների շրջանակում ստորագրվող փաստաթղթի կամ խիստ նույնականացման արդյունքում հաստատված գործարքի մասին և

չունի նաև դրանց բովանդակությանը հասանելիություն,
բ) imID-ն պատասխանատվություն չի կրում ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերի բովանդակության համար, ինչպես նաև այն պետական մարմինների կամ կազմակերպությունների տեխնիկական հարթակների համար, որոնցում կիրառվել է էլեկտրոնային ստորագրությունը կամ խիստ նույնականացումը: imID-ն պատասխանատվություն չի կրում Օգտատիրոջ և երրորդ անձանց միջև առաջացած վեճերի համար:
գ) Օգտատերը պարտավոր է ինքնուրույն գնահատել նույնականացում կամ էլեկտրոնային թվային ստորագրություն պահանջող գործարքի բովանդակությունը և դրա իրավական հետևանքները՝ նախքան PIN ծածկագիրը մուտքագրելը:

9.4. imID-ն ազատվում է պատասխանատվությունից երրորդ անձանց կողմից Օգտատիրոջ էլեկտրոնային ստորագրության, խիստ նույնականացման ծառայություններից օգտվելու բոլոր դեպքերում, բացառությամբ այն դեպքի, երբ հիմնավորվում է երրորդ անձին օգտագործման հասանելիություն imID-ի մեղքով տրված լինելու հանգամանքը:

9.5. imID-ն պատասխանատվություն չի կրում Ծառայությունների մատուցման անհնարինության կամ ուշացման համար, եթե դրանք առաջացել են imID-ի վերահսկողությունից դուրս հանգամանքների հետևանքով, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ հեռահաղորդակցության ծառայությունների խափանումներով կամ երրորդ կողմի գործողություններով:

9.6. imID-ն պատասխանատվություն չի կրում Հավաստագրերի, էլեկտրոնային թվային ստորագրության անօրինական օգտագործման համար, եթե այդ օգտագործումը տեղի է ունեցել Օգտատիրոջ գաղտնաբառի կամ այլ նույնականացման միջոցների կորստի կամ երրորդ անձանց տրամադրման հետևանքով և imID-ն պատշաճ կերպով չի ծանուցվել այդ մասին:

9.7. imID-ն պատասխանատվություն չի կրում, եթե Օգտատերը ոչ պատշաճ կամ անօինական կերպով է օգտագործել Ծառայությունները կամ իր անվամբ թողարկված Հավաստագրերը:

9.8. imID-ն և Օգտատերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտավորությունները լրիվ կամ մասնակի չկատարելու կամ ուշացնելու համար, եթե դա առաջացել է անհաղթահարելի ուժի (ֆորս մաժորի) հետևանքով:

10. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

10.1 Ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը imID պաշտոնական կայքում տեղադրելը համարվում է Օգտատերերի պատշաճ ծանուցում: imID-ն պարտավորվում է ծանուցել Օգտատերերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր դեպքերում:

10.2 imID ծանուցումները համարվում են պատշաճ, եթե՝

- հրապարակվել են imID կայքում կամ
- ուղարկվել են Օգտատիրոջ կողմից Դիմում-հայտով տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին կամ հեռախոսահամարին՝ հաղորդագրություն ուղարկելու միջոցով կամ
- ուղարկվել են փոստային կապի միջոցով՝ Օգտատիրոջ կողմից Դիմում-հայտով տրամադրված հասցեով:

Օգտատերն անձամբ պատասխանատվություն է կրում այս եղանակներից որևէ մեկով ծանուցումներ ուղարկելու արդյունքում երրորդ անձանց կողմից գաղտնի տեղեկություններ ստանալու համար:

10.3 Օգտատիրոջ ծանուցումներն ուղղված imID-ին համարվում են պատշաճ, եթե՝

- հանձնվել են առձեռն,
- ուղարկվել են imID info@imid.am էլեկտրոնային փոստի հասցեին,
- ուղարկվել են փոստային կապի միջոցով imID գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 24/1 հասցեով:

imID ուղղված բոլոր ծանուցումները պետք է լինեն պատշաճ ստորագրված, այդ թվում, բայց ոչ բացառապես էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով:

Օգտատերը պարտավորվում է տեղեկացնել Բջջային կապի օպերատորին իր հասցեների և կոնտակտային տվյալների փոփոխությունների մասին դրանց կատարումից հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, իսկ չտեղեկացնելու դեպքում անձամբ է կրում դրանից բխող բացասական հետևանքների ռիսկը:

11. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Ընդհանուր պայմանները, ինչպես նաև դրանցով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

11.2. imID-ի և Օգտատիրոջ միջև ծագած վեճերը ենթակա են լուծման բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերը ենթակա են լուծման դատական կարգով:

11.3. Ընդհանուր պայմանների որևէ դրույթի անվավեր կամ առոչինչ ճանաչումը չի ազդում մնացած դրույթների վրա, որոնք շարունակում են մնալ ուժի մեջ:

11.4. Ընդհանուր պայմանները կազմված են հայերենով, սակայն կարող են թարգմանվել և զուգահեռ հրապարակվել նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ լեզվով հրապարակումների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը: